

VI. ԳՈՐԾԱՌՈՒԹԱԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

2005թ.-ի ընթացքում հրավիրվել է ՀՀ ՎՊԽ 20 նիստ: Նիստերի ընթացքում քննարկվել է 83 հարց և արդյունքում ընդունվել է 80 որոշում, այդ թվում՝ 46 նորմատիվ, 14 անհատական և 20 արձանագրային:

ՀՀ ԱՎԾ համակարգում աշխատանքի բաժանումն ու մասնագիտացումն իրականացվել է ինչպես գործառնության (ճյուղային և բնագավառային վիճակագրություն), այնպես էլ օպերացիոն (տեղեկատվության օպերատորական մուտքագրում, խմբավորում, ամփոփում և տրամադրում) սկզբունքներով: Բացի այդ, կիրառվել են նաև ունիվերսալ մասնագիտացման (գյուղացիական տնտեսությունների, հասարակական և սոցիալական խմբերի ինտեգրացված հետազոտություններ) սկզբունքները:

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի աշխատակիցների մասնագիտական որակական կազմը բնութագրվում է տնտեսագետների գերակշռությամբ (47.2%) և բարձրագույն կրթությամբ կադրերի մեծամասնությամբ (87.0%): Աշխատողների 32.0%-ը տղամարդ է, 68.0%-ը՝ կին:

ՀՀ ԱՎԾ համակարգում աշխատանքի է ընդունվել 164 մարդ, որից՝

- «Պետական վիճակագրական տեղեկատվության հավաքագրում» ծրագրում -110
- ՀՀ ԱՎԾ աշխատակազմում -54, այդ թվում՝
քաղաքացիական ծառայողներ -31
քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնի նշանակվածներ -13
տեխնիկական սպասարկում իրականացնող աշխատողներ -10:

ՀՀ ԱՎԾ համակարգում աշխատանքից ազատվել է 113 մարդ, որից՝

- «Պետական վիճակագրական տեղեկատվության հավաքագրում» ծրագրից -66
- ՀՀ ԱՎԾ աշխատակազմից -47, այդ թվում՝
քաղաքացիական ծառայողներ -23
քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնի նշանակվածներ -16
տեխնիկական սպասարկում իրականացնող աշխատողներ -8:

Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնների համար անցկացված մրցույթների արդյունքում ավելի բարձր պաշտոնի է նշանակվել 8 քաղաքացիական ծառայող:

Վերապատրաստվել և ատեստավորվել են հետևյալ թվաքանակով քաղաքացիական ծառայողներ.

Քաղաքացիական ծառայության պաշտոնների խմբեր	Վերապատրաստվել են	Ատեստավորվել են	Ատեստավորման արդյունքում չեն համապատասխանել գրաղեցրած պաշտոնին
Գլխավոր	14	14	1
Առաջատար	22	20	-
Կրտսեր	17	18	1
Ընդամենը	53	52	2

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնները համարելու համար անցկացվել է 42 մրցույթ, այդ թվում՝

- 34-ը կազմակերպել է ՀՀ ԱՎԾ աշխատակազմը, որից մեկի արդյունքում հաղթող չի ճանաչվել,
- 8-ը կազմակերպել է ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմը, որից երկուսի արդյունքում հաղթողներ չեն ճանաչվել:

Արտամրցութային կարգով քաղաքացիական ծառայության պաշտոններում նշանակվել է 6 քաղաքացիական ծառայող:

«Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ՀՀ ԱՎԾ նախագահի կողմից համապատասխան դասային աստիճաններ են շնորհվել գլխավոր պաշտոններ զբաղեցնող 17 քաղաքացիական ծառայողների, իսկ աշխատակազմի ղեկավարի կողմից՝ առաջատար և կրտսեր պաշտոններ զբաղեցնող 74 քաղաքացիական ծառայողների:

Միջնաժամկետ ծախսերի ծրագրի հայտի համար հաշվարկվել է 2006, 2007, 2008, թվականներին ՀՀ ԱՎԾ աշխատակիցների համար սահմանվող պաշտոնային դրույքաչափերը և հավելվածարներն ըստ հիմնական աշխատավարձի հաշվարկման սանդղակի համապատասխան գործակիցների:

ՀՀ ԱՎԾ նախագահի՝

- 14.12.2005թ. թիվ 23-Ա հրամանով հաստատվել է «Պետական վիճակագրական տեղեկատվության հավաքագրում» ծրագրի 2006թ. աշխատատեղերի ցուցակը.
- 20.12.2005թ. թիվ 24-Ա հրամանով հաստատվել են ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության և աշխատակազմի կառուցվածքային ու առանձնացված ստորաբաժանումների ներքին կառուցվածքը և հաստիքային միավորների թվաքանակը (հաստիքացուցակը), ՀՀ ԱՎԾ աշխատակիցների 2006թ. հունվարի 1-ից գործող պաշտոնային դրույքաչափերը և հավելվածարները:

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավարի կողմից կնքվել են աշխատանքային պայմանագրեր «Պետական վիճակագրական տեղեկատվության հավաքագրում» ծրագրով (թվով 488):

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն է ներկայացվել տեղեկատվություն՝ ՀՀ կառավարության կողմից ՀՀ աշխատանքի շուկայի վերլուծության նպատակով միասնական համակարգի ստեղծման ծրագրով հաստատված ձևերին համապատասխան:

Պետական կենսաթոշակային սոցիալական ապահովագրության համակարգում անհատական հաշվառման ներդրումն ապահովելու նպատակով սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի տարածքային կենտրոն է ներկայացվել ՀՀ ԱՎԾ աշխատակազմի և «Պետական վիճակագրական տեղեկատվության հավաքագրում» ծրագրի աշխատակիցների համար անհատական հաշիվ բացելու մասին հայտեր:

Իրականացվել է ՀՀ ԱՎԾ հայտարարատու ղեկավար աշխատողների և նրանց փոխկապակցված անձանց կողմից ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայությանը ներկայացվող հայտարարագրերի ժամանակացույցի վերահսկում:

Ուսումնական և արտադրական պրակտիկա է կազմակերպվել Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտի, Ռուս-հայկական (Սլավոնական) պետական համալսարանի, Երևանի ֆինանսաբանկային և բորսային համալսարանի, Երևանի պետական համալսարանի թվով 142 ուսանողների համար:

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի 3 աշխատակիցներ ենթարկվել են կարգապահական տույժի (նախազգուշացում):

Երկարամյա և բարեխիղճ աշխատանքի համար 9 աշխատակիցներ խրախուսվել են շնորհակալագրով: